Կոլխոզային պատի թերթերը և գյուղթղթակիցները պետք է հասնեն հանրային գույքի զգաստ պահպանմանը համարական տակութից ու փչացումից:

Հրդեհները, հատկապես գյուղերում, մեծ վնաս են հասցնում ողետությանը, կոլխոզներին, առանձին քաղաքացիներին: Մինչդեռ մի շարք տեղերում հակահրդեհային միջոցառումներին նվիրվում է ծայրահեղորեն անբավարար ուշադրություն: Զրամրաբները և գեղի ջրամբարները տանող ճանապարհները յերեմն անմիթար վիճակումն են դունկում: Հրդեհ և բռնկելու բայց կրակը հանդցնելու հնարավորություն չկա: Հրշեց մեքենաները չունեն նասուներ, սայլակների անիվները չորացել են, դժբախտաբար այսպիսի պատկերի կարելի յէ հանդիպել առանձին կոլխոզներում:

Հրդեհները հատկապես վտանգավոր են բերքահամարքի ժամանակ, քանի վոր այդ պահին սովորաբար չոր յեղանակներ են լինում: Անհոգության, թափթփածության հետեանքով կրակը կարող է վոչչացնել թերքը, ֆերման, ախոռը և դրանով իսկ մեծ վնաս հասցնել հանրային տնտեսությանը:

Պատի թերթերը պետք է հասնեն այն բանին, վոր ձեռնարկություններում ու կոլխոզներում որինակելի հիմքերի վրա դրված լինի հակահրդեհային գործը, պետք է քննադատեն անփույթ ու անհոգ դեկավարներին, վորոնք վատ են հոգ-տանում ժողովրդական բարեքը պահպանելու մասին:

Պատի թերթերը և բանդյուղթղթակիցները պետք է հարդարանքով չըջապատեն այն բանվորներին, կոլխոզներին, խորհրդադաշտին ինտելիգենտներին, վորովն չնայելով վտանգին, կործանումից փրկում են պետական, հանրային բարեքը: Մեր թերթերը հաղորդում են վոչ քիչ թվով այնպիսի գեղեքը, յերբ պահակը չի հեռանում իր պոտուից, թերթերը պահպանելու մասին:

Սյովոլիսի մարզիկ կան ամենուրեք, այդպիսի հերոսներ կան յուրաքանչյուր կոլխոզում, յուրաքանչյուր ձեռնարկությունում: Դրանց մասին հարկալուր է գրել, զբանց հարկավոր և ըջապատել փառքի պատկով: Սյովոլիսի փաստերով պատի թերթերը պետք և աշխատավորների մեջ դաստիարակեն նվիրվածություն գեղի հայրենիքը, հերոսություն, ինամքոտ, հողատար վերաբերմունք դեպի հանրային բարեքը, վորպես սոցիալիստական ողետության անխախտ հիմք:

Յուրաքանչյուր որը մեղ համար բերում է հանրային բարեքի նկատմամբ սիրալիք, հողատար վերաբերմունքի ամենավառ որինակներ: Մեր կյանքը լի յէ խորհրդային քաղաքացիների հանալի արարքներով, վորոնց նպատակն է բազմապատկել հայրենիքի հարստությունները, ամրապնդել նրա հզորությունն ու փառքը: Բայց յերբեմն լինում են դեպքեր, յերբ մարդիկ տեսնելով, վոր պետական, կոլխոզային բարեքը փչանում, կորչում և, անտարեր անցնում են այդ յերեսութիւնի կողքով: Սյովոլիսի փաստերն ի հարկե բնորոշ չեն մեր իրականության համար: Այսոււամենայիվ չի կարելի չխոսել նման հակահասարակական արարքների մասին, վորոնք բացատրվում են նրանով, վոր մարդկանց մի մասի դիտակցության մեջ զեռ ապրում են կապիտալիզմի մնացուկները: Պատի թերթերը և բանդյուղթղթակիցները պետք է որինակներով ու փաստերով ցույց տան աշխատավորներին, վոր սոցիալիստական սեփականության պահպանումը նրանց հարազատ զործն է, վոր նրանցից յուրաքանչյուրի բարեկեցությունը կախված է պետական, հանրային բարեքի պահպանումից ու բազմապատկումից:

Միենույն ժամանակ մամուլը և բանդյուղթղթակիցները պետք է համարձակուրեն ու վճռականորեն մերկացնեն հանրային, սոցիալիստական սեփականությունը հափշտակողներին, պետք է հասնեն այն բանին, վոր նրանք խիստ պատասխանատվության յենթարկելով վորպես ժողովրդի ամենավլիներիմ թշնամիներ:

ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՆՈՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Սոցիալիզմի հաղթանակների հետևանքով արմատապես փոխվել են մեր յերկրի եկոնոմիկան։ Ընդմիշտ վոչչացված են մարդու շահագործումը մարդու կողմից։ Աշխատավոր մասսաները իմ ՀՄ-ում ապրում են յերջանիկ, ուներ կյանքով, աշխատում են իրենց համար, իրենց սոցիալիստական հայրենիքի համար։ Ստալինյան հնդամյակների կենսագործումը մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը զինեց առաջնակարգ տեխնիկայով։ «Մեզանում ստեղծված են այնքան նախարարյաներ, այնքան հնարավորություններ մեր հասարակության հետադավերեքի ու լիակատար ծաղկման համար, վոր այժմ վլաստություննում կոմունիստականորեն-դիտակցական վերաբերմունքն ե դեպի իր աշխատանքը և, հատկապես, խորհրդային խումբենցիայի աճած կադրերի գաղափարական դաստիարակման ուղղությամբ կատարվող մեր բոշեկիյան աշխատանքի հաջողությունը։ (Մոլոտով. զեկուցում Համել(ր)կ 18-րդ համադրումարում)։

Մեր եկոնոմիկայի մեջ կատարված խոշորագույն, արմատական փոփոխությունները, մեր յերկրի սոցիալիստական վերափոխությունը, փոփոխել են նաև հենց մարդկանց, նոր, սոցիալիստական հասարակարգը ստեղծողներին։ Փոխվում ե գիտակցությունը, վերաբերմունքը դեպի աշխատանքը, մշակվում են նոր հայացքներ, ստեղծվում ե նոր, կոմունիստական լենցաղ, մշակվում ե նոր բնակորություն, Սոցիալիզմի յերկրի աղաւ քաղաքացու բնակորությունը, քաղաքացու, վորը լի յե պատահանատվության զգացմունքով իր պետության հանդեպ, աղատադրված ե հնի սովորույթներից ու մնացուկներից։

Կոմունիստական դիտակցականության աճումը, կուլտուրական հեղափոխության հաջողություններն իրենց հերթին առաջնում

են մեր հայրենիքի տնտեսական զարգացումը, նպաստում են աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացմանը, ուստի, պատի թերթերը և բանդյուղթղթակիցները պետք ե աշխատավորներին ողնեն սոցիալիստական կուլտուրայի հետագա ծաղկման, նոր, խորհրդային կենցաղի ամբապնդման, նոր մարդու— կոմունիստական հասարակության վկատակից կառուցողի գամատիարակման համար մղվող նրանց պայքարում։

Մեծ են մեր հաղթանակները կուլտուրական ճակատում։ Գաստիարակված են խորհրդային խոտելիգենցիայի հիմնալի կազմեր, խումբելիքնեցիայի, վորի բանակը կազմում ե ավելի քան 9 և կես միլիոն մարդ։ Յերրորդ Հնդամյակում պետք ե իրականացվի ընդհանուր միջնակարգ ուսուցումը՝ քաղաքում և պետք ե ավարտվի ընդհանուր յոթնամյա ուսուցումը՝ գրուդում։ Աճում ե դիտական հաստատությունների, թատրոնների, ակումբների, գրադարանների, ընթերցարանների, կուլտուրայի տների ցանցը։

Բայց կուլտուրական ճակատում ձեռք բերված այս վիթխարի հաջողությունները չպետք ե տանեն դեպի խնդրահանձնուացում։ «Կուլտուրայի բնագավառում սոցիալիզմի վերջնական հաղթանակի մասին խոսելը դեռ վաղ է։ Դրա հետ ե կապված այն փաստը, վոր մեղանում դեռ այնքան չատ աշխատանք կա կատարելու մարդկանց դիտակցության միջից կատվիտալիզմի մնացուկները վերացնելու ուղղությամբ։ Դրանք կարելի յե հաջողությամբ վերացնել միայն սոցիալիստական կուլտուրայի բայն վերելքի միջոցով։ Բայց դրա փոխարեն, խօսական սոցիալիստական կուլտուրայի ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր քայլ վոչ միայն տալիս ե իր անհապաղ արդյունքները, այլև նախադրյաներ ե ստեղծում սոցիալիզմը կոմունիզմի վերաճելու համար։ (Մոլոտով)։

Պատի թերթերի խմբկուները և բանդյուղթղթակիցները պետք ե մշտական հետաքրքրվեն, թե ինչպես ե կատարվում կուլտուրագալքական աշխատանքը, պետք ե համեն նրա ամեն կերպ ծավալմանը։ Ակումբների, գրադարանների, դպրոցների, խըմբեկների գործունեյությունը պետք ե սիստեմատիկաբար լուսաբանվի պատի թերթում։ Տպագրելով համապատասխան թըղթակցություններ, պատի թերթը կողնի ընթերցողի մեջ հետաքրքրություններից, պատի թերթը կուլտուրական համար մղվող նրանց պայքարում։

ՔԵՐՔՄՈՒԹՅՈՒՆ առաջնորդի զեսլի լավ կիրքը, թատերական բեմագրությունը, կինոնկարը:

Կուրսիկի մարզի Շերեկինսկի շրջանի «Պարտիզան» կոլխոզի «Վակերյող» ամենորյա պատի թերթը հանդիսացավ 400 տեղանոց ակումբի կառուցման նախաձեռնողը: Ստալինդրադի մարզի Նովո-Անդինսկի շրջանի Գորկու անվան կոլխոզի «Գորկու ստանովցա» պատի թերթը հասավ այն բանին, վոր ռադիոֆիկացիայի յենթարկվեց և կահավորվեց կոլխոզի կարմիր անդրունը:

Լ. Մ. Կաղանովիչի անվան «Շարիկոպոդչիպնիկ» գործարանի պատի թերթերն արծարծում են մի շարք ամենահետաքրքիր հարցեր: Այսպես որինակ, «Ավտոմատչիկ» ամենորյա պատի թերթը սիստեմատիկաբար տպագրում է «Նոր գրքեր» բաժինը, գորի մեջ պատմում է գրաչուկայի նորությունների մասին: Համարներից մեկում նա հաջորդում եր, որինակ, վոր Մոսկվայում բացվել ե ցուցահանդես՝ նվիրված «Ասք Իգորի գնդի մասին» հին-ռուսական հանճարեղ եղոսին:

Նույն այլ գործարանի «Սիկնալ» թերթը պայքարում է արտադրության հրամանատարների և շարքային բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու համար:

Այսպես որինակ, համարներից մեկում նա պատմում եր նորոգման-մեխանիկական ցեխի ստախանովական խառաս ընկ. Ա. Ֆոմիչեկի մասին: Նրան հանձնարարվել եր բարդ սեպարատորների պատրաստումը: Այդ աշխատանքն ընկ. Ֆոմիչեկն անցյալում առիթ չեր ունեցել կատարելու: Այնուամենայնիվ նա ստացին իսկ որը լավ յուրացրեց աշխատանքը և պատրաստեց 250 սեպարատոր: «Այդպիսի արտադրանք ցեխում դեռ վոք չեր տվել»— զրում է թերթը: Այնուհետև ընկ. Ֆոմիչեկը հասնում է նոր նվաճման, պատրաստելով արդեն 280 սեպարատոր:

Դրա կողքին տպագրված է մի այլ թղթակցություն՝ «Ռւաճան գերազանցիկը» վերնադրով: Այդ թղթակցության մեջ դարձյալ պատմվում է ընկ. Ֆոմիչեկի մասին:

«Ընկ. Ֆոմիչեկի բնորոշ դիմուն ե— անչեղ ձգտումը դեպի աշխատանքի կուլտուրան, դեպի ընդհանուր կուլտուրա: Նա անընդհատ սովորում է, բարձրացնում է իր մտահորից դոնը: Սոցիալիստական աշխատանքի վարպետների դասըն-

թացներում, վոր նա ավարտեց այս տարի գերազանց դնահատականով, ընկ. Ֆոմիչեկը միանդամից հենց առաջ քաշվեց լավագույններից շարքը և իր վրա գրավեց դաստառուների ուշագրությունը:

Անանը նա ընդունվեց Զերժինսկու անվան մեքենաշինական տեխնիկամբը և այսուեղ նույնութեա տեղ դրավեց լավագույնների մեջ»:

Ինչպես յերեսում է, առաջին և յերկրորդ թղթակցությունների միջև կա ամենասերտ կապ: Արտադրության մեջ ձեռքբարված հաջողությունները հիմնվում են դիտելիքների ամուր հիմքի վրա, պիտելիքներ, վոր ստախանովական ընկ. Ֆոմիչեկ ստացել ե դասընթացներում և տեխնիկումում սովորելու ժամանակ:

Պատրի թերթերը պետք ե իրենց ընթերցողներին դաստիարակեն կոմունիստական բարոյականության վորով, նրանք պետք ե պայքարեն նոր, խորհրդային կենցաղի համար: Վ. Ի. Լենինը մատնանշում եր, վոր «Կոմունիստական բարոյականության հիմքում ընկած ե պայքարը կոմունիզմի ամրապնդման ու ավարտման համար»: Ազնվորեն աշխատել ի բարորություն յերկրի, ողնել հետ մնացողներին, պահպանել սոցիալիստական հանրակեցության կանոնները, պղնվորեն, ճշմարտացի վերաբերվել դեպի խորհրդային մարդիկ, ատել սոցիալիզմի թշնամիներին և անողոքաբար պայքարել նրանց դեմ,— այս հատկությունները հատուկ են նոր, խորհրդային մարդուն: Ծուլությունը, խուլգանությունը, կեղծավորությունը, վո՛չ ընկերական վերաբերմունքը կանանց նկատմամբ, այլազդի քաղաքացիների նկատմամբ և նման հակահասարակական արարքները կապիտալիզմի մնացուկներ են մարդկանց դիտակցության մեջ:

Դեռ կան անդիտակից, հետամնաց մարդիկ, վորոնք արշամարհանքով են վերաբերվում դեպի ամուսնությունն ու ընտանիքը, խուսափում են հայրական պարտականություններից: Պատրի թերթերը պետք ե պայքարեն կենցաղում յեղած այդպիսի այլանդակ յերեսութերի դեմ, նրանք պետք ե ամենորյա գաստիրակչական աշխատանքով աշխատավորներին ողնեն վերացնել չին, բուրժուական հասարակության մնացուկներն իւրենց գիտակցության միջից:

Ժետոմիքի մարզի Ռլեվսկի շրջանի Վարչութելովի անվան կոլ-խողում լույս տեսնող «Ստախանովկեց» թերթը սիստեմատիկա-րար լուսաբանում է կենցաղի հարցերը: Թերթը ստեղծել է մշտական բաժին— «Գյուղական դաստարանում»: Մի անգամ դաստարանը քաղաքացի Ռին տուգանել եր 10 ոռորդով, այն բա-նի համար, վոր նա իր աղջկան թույլ չեր տալիս դպրոց հա-ձախել: Պատի թերթը հրապարակեց ուսուցիչների և կոլխոզ-նիկների հոդվածները, վորոնք դաստավարտեցին Ռի արարքը և արձարձեցին մանուկների դաստիարակության հետ կապված մի շարք հարցեր: Այդ գործի շուրջը ստեղծված հասարակական կարծիքն ողնեց զգալիորեն բարելավելու դաստիարակչական ու գոլոցային աշխատանքը:

«Պրիկարպոննիկ» պատի թերթի (նույն շրջանի Ռլեվսկի արհեստագործական արտել) յուրաքանչյուր համարում կտ հա-տուկ բաժին ընտանիքի և կենցաղի մասին: Այդ բաժնում տպա-զրոյում են այնպիսի թղթակցություններ, վորոնք տեղական փաստերի և որինակների միջոցով ցույց են տալիս, թե ինչպես և աճում աշխատավորների կուլտուրական մակարդակը:

Պատի թերթում նյութեր են հրապարակվում հակակրօնա-կան աշխատանքի մասին, հիգիենայի, բնակարանների մաքրու-թյան մասին, ցույց և տրվում հարբեցողության վնասակարու-թյունը և այլն:

Պատի թերթը հարց բարձրացրեց կուլտուրական աշխա-տանքն ուժեղացնելու մասին: «Անհրաժեշտ են նշել, որ զրում եր թերթը, վոր կոմյերիտական կազմակերպությունը և արտելի վարչությունը չեն հետաքրքրվում աշխատավորների կենցա-զով, ինչպես հարկն ե չեն զբաղվում կուլտուր-դաստիարակչա-կան աշխատանքով»:

Թերթի նախաձեռնությամբ կաղմակերպվեց թժշկի պրոցես ալկոհոլի վնասակարության մասին, կաղմակերպվեց մի հակա-կրօնական դաստիարակություն: Արտելում աշխուժացավ կուլ-տուր-լուսավորական աշխատանքը:

Կուլտուրական աշխատանքին զբաղի ուշադրություն ե նվի-րում վաղոնացին յերկրորդ տեղամասի (Մոսկվայի մարզ, Լո-սինոոստրովսկ) «Զա զդորովի վագոն» ամենորյա պատի թեր-թը: Նա 1940 թի սկզբին հանդես յեկալ մի հողմածով՝ յն-թաշնի գոլոցում պիոներական կոլվարների աշխատանքի մա-

սին: Պատմելով կոմյերիտականների մասին, վորոնք մեծ ու հետաքրքիր աշխատանք են կատարում պիոներների մեջ, պատի թերթը քննադատում երջոկատավարներին, վորոնք անփութի են վերաբերվում դեպի իրենց պարտականությունները, դպրոցին չեն ողնում պայքարելու վերադանց առաջադիմության և ամուր կարգապահության համար:

Թերթը քննադատում ե այն զեկավարներին, վորոնք չեն հոկում, թե ինչ և կատարվում բանվորների հանրակացարաննե-րում: Իսկ այստեղ լինում են զետքեր, յերբ հարբած մարդիկ կոխվներ, առուր ու դմիոց են սարքում: Պարեալ և մասսավիկը վոչ մի միջոց ձեռք չեն առնում հանրակացարանում կուլտուրա-կան կյանքը կազմակերպելու համար:

«Զա զդորովի վագոն» պատի թերթը ջերմորեն նշեց գրա-ռարանապետուհի Յե. Պ. Բերեստովյայի տանամյա աշխատան-քը, մի աշխատադի, վորը շատ բան և արել բանվորների մեջ տեխնիկական գիտելիքների ոլրուպալանդայի համար: Բնկ. Բե-րեստովյան հեռախոսով և փոստի միջոցով ընթերցողներին հա-զորում և օտացված նոր զրքերի մասին, ներդրակում և նոր ընթերցողներ:

Վորաբես թերթի հավելված, լույս ե տեսնում «Վոչ թե ունքին, այլ աչքին» վերնադրով թերթիկը: Նրա մեջ կծու կեր-պով ծաղրվում են հարբեցողները, գործալիքները, անվույթ մարդիկ:

Արվեստի գործերի կոմիտեյում (Մոսկվա) լույս տեսնող «Խաբոսնիկ խակուսսավ» (արվեստի աշխատող) պատի թերթի խմբկով նախաձեռնություն ցուցաբերեց, բարձրացնելով կոմու-նիստ ծնողների կողմից մանուկների դաստիարակության հար-ցը:

Պատի թերթի ակտիվիտաներն այցելեցին մի շարք գոլոց-ներ, վորտեղ սովորում են կոմիտեյի աշխատողների յերեխա-ները: Նրանք զրուցյաներ ունեցան մանկավարժների, դասար-նային զեկավարների ու ծնողների հետ: Դրա հետեանքով պա-տի թերթն աշացավ շատ հետաքրքիր նյութ: Հողվածներից մե-ն կում պատմվում ե այնպիսի ծնողների մասին, վորոնք չեն զբաղվում իրենց յերեխաների դաստիարակությամբ, նրանց չեն ողնում ուսման ասպարիզում: Ուստի, նրանց յերեխաներն ան-ողնում

կարդապահ են, փախչում են դասերից և հաճախ ստանում են վաս դնահատականներ:

Պատի թերթն այդ համարումն ել հենց պատմեց այն ծնող-ների մասին, վորոնք մեծ ուշաղըություն են նվիրում իրենց յերեխաների դաստիարակությանը, հետևում են նրանց վարքին և առաջադիմությանը՝ դպրոցում:

Պատի թերթի այդ նյութն առաջացրեց շատ արձականքներ և քննության առնվեց կուսակցական ժողովում:

Աշխատավորության ֆիզիկական զարգացման Հարցերը պետք ե զգալիորեն ավելի շատ տեղ դրավեն պատի թերթերի հջերում, քան դրավել են մինչեւ այժմ: Մեր յերկրում հսկայական ժողովրդականություն են վայելում ֆուտբոլը, գահուկային սպորտը, թեթև ատլետիկան, հրաձգային դործը: Սակայն խմբելուները յերբեմն հարկ չեն համարում նույնիսկ մի քանի տող նվիրել տեղի ունեցող մրցությանը, նկարագրել այդ մըրցության մեջ հաղթողների նվաճումները:

Պատի թերթերը կարող են շատ բան անել ֆիզկուլտուրային շարժման հետալա զարդացման համար: Խմբելուները պետք է պատի թերթերում մասնակցության ներդրավեն ֆիզկուլտուրայի հրահանգիչներին և սիրող-ֆիզկուլտուրնիկներին, ավելի հաճախակի տպագրեն նրանց թղթակցությունները, հանդես դան վորպես դահուկային բաղաների, սպորտային հրապարակների կազմակերպման նախաձեռնողներ, ոժանդակեն մրցության զարգացմանը կոլեկտիվների և առանձին ֆիզկուլտուրնիկների միջև: Այս ամբողջ աշխատանքն ունել խոշորադույն պաշտպահանական նաև նախակություն:

ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԽՈՐՀՐԴԱՅՑԻՆ ՀԱՅՐԵՆԱ-ՍԻՐՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՄՈՒՆՔ

Մեր հայրենիքը դաստիարակել ե հիանալի հայրենասերների, վորոնք անձնվիրաբար պայքարում են սոցիալիզմի հետազա հաղթանակների համար: Հերոս-ողաչուները, տանկիստները, հրետանավորները, հեծելակները, հետեւակայինները, վորոնք արխարար կատարում են կուսակցության ու կառավարության հատուկ առաջադրանքները, ստախանովականները, վորոնք ձեռք են բերում աշխատանքի բարձր արտադրողականություն, հարուստ բերք, նոր հիանալի կառուցումներ ստեղծողները՝ գրանք բոլորն իրենց գործերով փառաբանում են իրենց հայրենիքը, բարձապատկում են նրա հզորությունն ու հարսատությունը:

Հայրենիքի նկատմամբ անձնակոչ սիրո մի վառ արտահայտությունն ե հանդիսանում Ֆերգանայի մեծ ջրանցքի կառուցումը: Աւզեկել և տաջիկ կոլխոզնիկներն իրենց նախաձեռնությամբ կառուցեցին 270 կիլոմետր յերկարություն ունեցող ջրանցք: Շինարարությանը մասնակցում ելին 160 հաղար կոլխոզնիկներ, վորոնք 45 որվա ընթացքում փորեցին համարյա 18 միլիոն խորանարդ մետր հող: Ամենակարծ ժամկետում կատարված և այնպիսի մի աշխատանք, վորի համար թվում ե թե հարկավոր ելին շատ տարիներ:

Ըստալինը մեկ սովորեցնում ե «գարգացնել և արմատավորել խորհրդային հայրենասիրությունը»: Մեծ Սոցիալիզմի յերկրի յուրաքանչյուր քաղաքացի պետք ե ունենա հերոսություն, անձնվիրություն, արիություն: Պատի թերթերի, ինչպես և ամբողջ բուշեիկայն մամուլի խնդիրն ե՝ աշխատավորների մեջ դաստիարակել այդ հատկությունները, ամրապնդել սերը դեպի իրենց մայր հայրենիքը:

Դեպի սոցիալիստական հայրենիքը, դեպի իրենց հարազայտ

բոլշևիկյան կուսակցությունն ունեցած սիրո այս զգացմունքը՝ ները միևնույն ժամանակ անխղելիորեն կապված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի հետ, միջազգային պրոլետարիատի առջև պատասխանատվության դրացմունքի հետ: Խորհրդային ժողովուրդը ցուցադրեց իր հավատարմությունն ինտերնացիոնալ խաղիքների նկատմամբ, ոդնության ձեռք մեկնելով Արևմտյան Ռեկրախնայի և Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդներին, վորոնք անքում ելին լեհական պաների ճնշման տակ:

Աշխատավորներին դաստիարակել խորհրդային հայրենասիրության վորով—այդ նշանակում է նրանց պատվաստել այնպիսի հատկություններ, վորոնք հատուկ են կոմունիստական հասարակության քաղաքացուն:

Խորհրդային հայրենասիրության, իր հայրենիքի նկատմամբ խորհրդային ժողովրդի մեծ սիրո արտահայտությունները յերեսում են և պանծալի ողաչումների հերոսական թոփչքների մեջ, վորոնք ասհմանեցին համաշխարհային ոեկորդներ, և մեր պանծալի Կարմիր բանակի խոշորագույն անցումների, մարտական դործերի մեջ: Խորհրդային հայրենասիրությունը զբաժորվում է սոցիալիստական շինարարության բոլոր բնադավառներում—Փարբիկաներում և գործարաններում, սովորովներում, կոլխոզներում, հիմնարկներում և այլն: Պատի թերթերը պետք է աշխատավոր մասսաներին դաստիարակեն խորհրդային մարդկանց հիմնալի հերոսության կոնկրետ որինակներով ու փաստերով:

Անհրաժեշտ է, վոր պատի թերթերը հատուկ ուշադրություն նվիրեն մեր հայրենիքի պաշտպանությունն ամրապնդելուն: «Հարկավոր է մեր ամբողջ ժողովուրդը պահել,— ասաց ընկեր Ստալինը, — մորիլլզացիոն պատրաստության վիճակում՝ ուղղմական հարձակման վտանգի հանդեպ, վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի տեսակ Փոկումներ չկարողանան հանկարծակիի բերել մեզ»:

Հատ պատի թերթեր մեծ ուշադրություն են նվիրում պաշտպանական աշխատանքին: Կրամնողարի յերկրամասի Տիմաշևսկի շրջանի Կադանովիչի անվան կոլխոզի «Զա տեմպի» («Տեմպի համար») պատի թերթի խմբկոլը կազմակերպել եր կոլխոզների նամակագրություն իրենց հայրենակից կարմիր-բանակայինների հետ: Զերնիդուսկի մալզի Մալոդեցկի շրջա-

նի Դիմիտրովի անվան կոլխոզի «Ուգարնիկ» պատի թերթը հասավ Պաջը-Ավիտաքիմի աշխատանքի բարելավման: Դրա հետեւ վանքով կոլխոզը պատրաստեց 25 վորոշիլովյան հրածիգներ, 18 «Պատրահամատ աշխատանքի և պաշտպանության» կրծքանշանակիրներ:

Պաշտպանական աշխատանքին մեծ ուշադրություն է նվիրում Լ. Մ. Կադանովիչի անվան «Շարիկոպողչիպնիկ» դործարանի «Ավտոմատչիկ» պատի թերթը, վորի մասին մենք վերելիում հիշատակեցինք: Այդ պատի թերթի խմբկոլը լույս է ընծայում հստուկ համարներ՝ նվիրված Պաջը-Ավիտաքիմի ցեխային կաղմակերպության աշխատանքին:

«Այդպիսի հայրենասերներ ունեցող յերկիրն անողարտելլյա» վերնադրով հոդվածի մեջ «Ավտոմատչիկ»-ը գրում է,

«Մեր ցեխի զորակոչիկները, Խորհրդային Միության զորակոչիկների հետ միասին, զորակոչի սկիզբը դիմավորում են լավ պատրաստությամբ: Բոլոր զորակոչիկներն ունեն պաշտպանական կրծքանշաններ: Մի քանի ընկերներ ավարտել են ողաչուական և պարագյուտիստական դասընթացները: Զորակոչիկների մի մասը զորակոչի պահին արդեն ավարտել է թոփչքային զպրոցները:

Ողաչույի կոչում են ստացել կոմյերիստական զորակոչիկներ՝ ընկերներ Միչակովը, Զադորակին, Խարիտոնովը և ուրիշներ: Կոմյերիստական ընկերներ իրականացնելու սովորել են ավտոմորի վարելը: Հավաքակայան ներկայական ստացված առաջին ծանուցագրելը մեծ հրճվանք են առաջացրել զորակոչիկների մեջ: Յեխի հասարականությունը չափազանց ջերմութեան նշում է մեր յերիտասարդության ձգտումը. Կարմիր բանակում ծառայելու նըկատմամբ:

Զորակոչին նախորդող որերը զորակոչիկները նշանավորեցին արտադրական աշխատանքում ձեռք բերված նորանոր նվաճումներով: Զորակոչիկների վոգեորությունը ցույց է տալիս, վոր այս տարի Կարմիր բանակ կանչվող յերիտասարդությունը հիանալի համարում է ներկայացնում: Այդպիսի հայրենասերներ ունեցող յերկիրն անպարտելի յի»:

Դժբախտաբար, շատ պատի թերթեր խորհրդային հայրենասիրության, յերկրի պաշտպանության մասին դրում են ընդ-

հանուր, ճռճռան Փրաղներով: Մինչդեռ կյանքը բերում և բաղ-մաթիվ վառ փաստեր ու ողինակներ, վորոնց մասին հաղորդե-րով, պատի թերթերը մեծ ողուտ կբերեն խորհրդային հայրե-նասիրության և դեպի իր հայրենիքը սեր դաստիարակելու գործում:

Ստալինգրադի տրակտորային գործարանի ավտոմասային ցեխի պատի թերթը հրապարակել եր մի հոդված՝ «Յերեք յեղբայրներ» վերնազրով:

«Մենք յերեք յեղբայր ենք,— զրում ե Վ. Ակսենովը, այդ հոդվածի հեղինակը: — Ավագ յեղբայրս՝ Մաքսիմը— տրակտորիստ ե և զյուղատնտեսական բարդ մեքենաների մեքենավար: Յես ինժեներ-տեխնոլոգ եմ: Ստեղանը տրակտորիստ ե և կոմբայնավար: Մաքսիմն ինտերվենտների դեմ մզված կոիմներում մարտական ծառայությունների համար Խորհրդային կառավարությունից ստացել ե բարձր պարզեցած կարմիր գրոշի շքանշան: Ինձ բաժին ընկալ վերջնականապես ջախջախել հականդախիսության մնացողները, վակուլինի, Պոլովի բանդիտներին և բուխարա-կան բասմաչներին...»

...Խորհրդային իշխանության որով մենք ստացանք դեպումներ. յես՝ ինսալիտուտը վերջացնելու, յեղբայր-ներս՝ տրակտորիստների և կոմբայնավարների գասընթացներն ավարտելու: Մենք այժմ խորհրդային մասնագիտներ ենք, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ըստեղծված ինտելիգենցիայի մի մասը: Մեր գիտելիքները մենք նվիրում ենք սոցիալիստական շինարարությանը, խորհրդային ժողովրդին: Յեթե կառավարությունը պահանջի, մենք նորից կջախջախենք թշնամուն, վորը ձեռք կբարձրացնի մեր հայրենիքի վրա»:

Այս նամակը— սոցիալիստական հայրենասիրության մի վառ փաստաթուղթ ե, վորը ցույց է տալիս, վոր խորհրդային մարդիկ պատրաստ են կրծքով պաշտպանելու իրենց հայրենիքը, չինայելով իրենց կյանքը:

Հոկտեմբերի 12-րդ տարեղարձի անվան կոլխոզի (Դնեպրոպետրովսկի մարզի Ստալինոպոլիսի շրջան) «Ստախանովկա» թերթը տպագրել եր մի կարմիրբանակայինի մոր նամակը

«Իմ վորդին» վերնազրով— մի հիանալի նամակ, վորը լի յե խորհրդային հայրենասիրության զդացմունքով:

«Իմ վորդիներին ուղարկուելով Բանվորա-Գյուղացիական կարմիր բանակի շարքերը,— ասվում ե նամակի մեջ,— յես նրանց պատղամ տվի մինչև վերջ սիրել իրենց ժողո-վրդին, պահպանել մեր յերշանիկ կյանքը:

Յերբ Խասան լճի մոտ մինչև ատամները զինված թըշ-նամիներն ուղում ելին խախտել մեր սրբազն սահմանը, իմ վորդին՝ Արխիպի իր ընկերների հետ միասին առաջինը մարտի զնաց թշնամու զեմ: «Հանուն Ստալինի», «Հանուն Ստալինյան Սահմանադրության» բառերը շուրջերին, իմ վորդին մինչև իր վերջին ուժերը կովում եր հանուն յեր-ջանիկ, հրճվալից և ուրախ կյանքի:

Մարտական ծառայությունների համար, կառավարությունն իմ վորդուն պարզեաորեց կարմիր գրոշի շքանշանով: Պանծալի բժշկությունը ինամեց իմ վորդուն և նա նորից զնացել ե պահպանելու մեր հայրենիքի հեռավոր, սրբազն, անխախտ սահմանները:

Վերջերս իմ վորդիներից յերկուուր ևս զնացին Բանվո-րա-Գյուղացիական կարմիր բանակի շարքերը, վորպես կա-մավոր: Նրանք նույնպէս կպահպանեն սահմանը և մեր յերջանիկ կյանքը»:

Գորկու մարդի կույքիչնի անվան կոլխոզի ամենորյա պատի թերթը հրապարակել եր կոլխոզնիկ, կարմիր բանակի շարքերում գանգող Վ. Գոլովկինի նամակը: Նա ցույց է, վոր առցիա-լիդի բանակի մարտիկի պատվաղոր կոչումն արդարացնում է մարտական ու քաղաքական գերազանց պատրաստությամբ:

Ընկ. Գոլովկինը կոլխոզնիկներին կոչ է անում կոլխոզում աշխատել աղնվորեն, պայցըրել Արգամասի շրջանում ամենա-բարձր բերքի համար:

«Ռակլյա» ամենորյա պատի թերթը, վոր ցույց է տեսնում Տրյուխ գորնայա Փարբիկայի (Մուկլա) տպման ու ներկի յեփ-ման ցեխում, 1940 թվի հունվարին հրապարակել եր բանվոր Զասիմովի մի հիանալի պատմվածքը: Այն կոչումն է «Հոր հրճվանքը և սրբածանքը»:

Ընկ. Զասիմովի վորդուն, Բորիսին 1938 թվի սեպտեմբերին կանչեցին Բանվորա-Գյուղացիական կարմիր բանակի շարքերը:

«Հըմկանքով եր իմ վարդին զնում ԲԳԿԲ շարքերը, — պատմում ե ընկ. Զասիմովլը: — Փոքը հասակից զաստիաբակած լինելով պիտի բական կարմակերպության մեջ, այնուհետև՝ կողյօնության մեջ, լինելով կրակու ֆիգկուլտուրնիկ, կրծքանշանակիր, նաև լավ նախագաղատրաստված եր ԲԳԿԲ մարտիկների շարքերը մանելու համար»:

Ճանապարհելով վորդում, ընկ. Զասիմովլը հայրական նակադովեց նրան:

«Տես, Բորիս, աղնվորեն կատարիր խորհրդային քաղաքացու սրբազն պարտականությունը — աչալուրջ պահպանիր մեր սահմանները, յեղիր կարգապահ, տիրապետիր սաղմական տեխնիկային և զալիք մարտերում չինայելով կրանք, պաշտպանիր հայրենիքը»:

Բորիսը դարձավ կրտսեր հրամանատար: Նա գտնվում եր հերոսական կարմիր բանակի այն զորամասերում, վորոնք լիկ-վիդացիայի յենթարկեցին պատերազմի վտանգավորագործին պը-լացլաբմը ԽՍՀՄ-ի դեմ, ապահովեցին մեր հյուսիս-արևմտյան սահմանների անվտանգությունը, Լենինգրադի, Մուրմանսկի ու Սուրբանյան յերկաթուղու անվտանգությունը և մասնակցեց յերեք կռվի: Վերջին կռվի նախորյակին Բորիսը նամակ դրեց ծնողներին: Նրա մեջ ասվում ե.

«Այսոր յերրորդ անդամ կռվի յեմ զնում ժողովրդի թշնամիների դեմ: Խնդրում եմ վորեկ բան պատահելու գեղքում ինձ հիշեք վորաբես բոլշևիկի, վորաբես իմ հայրենիքի նվիրված զալակի...»:

Այսուհետեւ ստացվեց յերկրորդ նամակը.

«Դեկտեմբերի 9-ին... յես վիրավորվեցի սպիտակֆինների դեմ մղված կռվում... Գտնվում եմ № Հիվանդանոցում. Լավ են բուժում: Յուրաքանչյուր մահճակալի կողքին դրված ե ուաղին, հաճախ զիտում ենք կինոնկարներ, լսում ենք պատեփոնի նկազը, մեղ այցելում են հրամանատարները և հրամկազմի կանաչը, բերելով մեղ համար ամեն բան, ինչ վոր ուղենք. ուստի, խնդրում եմ չանհանդատանաք: Ինձ համար վոչինչ ուղարկել հարկավոր չե, բացի նամակներից: Վողջում հաղորդեցի իմ հարազատներին ու ծանոթներին: Ասացեք նրանց, վոր Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի մարտիկները կվոշնչացնեն պատերազմի հրձիգներին»:

Ընկ. Զասիմովլը հպարտանում ե իր վորդիներով: Նա ունի յերեք վորդի և բոլորն ել ԲԳԿԲ շարքերումն են: Ավագ վորդին՝ Վասիլիին Խաղաղովիկիանույան նախատորմի լեյտենանտ է: Յերկ-բորդ վորդին՝ Դմիտրին, վոր 18 տարեկան է, Կարմիր բանակի շարքերն եր գնացել վորպես կամավոր: Նրան ընդունեցին թոփչքային գորամասում: Այժմ նա լեյտենանտ է:

Ընկ. Զասիմովլը պատասխան ուղարկեց Բորիսին: Պատասխանի մեջ նա դրում է.

«Վորդիս, դու կովում վիրավորվել ես: Յես հպարտանում եմ, վոր դու՝ պատվով կատարեցիր քո պարտքը հայրենիքի հանդեպ և չինայելով կյանքը կովեցիր մարտում: Դու արդարացրեց մեծ Խորհրդային յերկրի կարմիր մարտիկի կոչումը... Հարոկ յեղած պահճին, յեթե ամհրաժեշտ լինի, ապա յես ել, ծերուկս, հրացան կվերցնեմ, վորպեսզի վորդիներիս հետ ճեռք ձեռքի տված պաշտպանեմ մեր հարազատ, ծաղկող հայրենիքը»:

Ընկ. Զասիմովլի պատմածը — խորհրդային մարդկանց մեծ հայրենասիրության մի վառ, հուզիչ ցուցադրումն է, մարդկանց, վորոնք անսահման սիրում են իրենց սոցիալիստական հայրենիքը: Այն զրգած է պարզ, սրտապին լեզվով, հետաքրքրությամբ կարգացվում է:

Հրազդարակելով նման նյութեր, պատի թերթերն ողնում են աշխատավորների մեջ սոցիալիստական հայրենասիրության զգացմունքների ամրապնդմանն ու դարձացմանը:

Ճիշտ և վարվել «Մայակ կուլտուրայի» կոլխոզի (Կրասնոյարսկի յերկրամաս) «Նովայա Ժիզն» պատի թերթը, հատուկ մի նվիրելով կոլխոզում կատարվող պաշտպանական աշխատանքի: Առվորաբար թղթակցություններ տպագրելով պաշտպանական աշխատանքի մասին, շատ թերթեր սահմանափակվում են հաղորդելով, թե վո՞րքան հրաձիգները ու կրծքանշանակիրներ են հաղորդելով, և այլն: «Նովայա Ժիզն» պատի թերթը վարվեց այլ կերպ: Նա զետեղեց հետաքրքր մի հողված վորոշիրովյան հեծելակների խմբակի աշխատանքների մասին: Այդ խմբակը կազմակերպվել եր պատի թերթի խմբկովի նախաձեռնությամբ: Դեռ 1939 վել եր պատի թերթի խմբկովի նախաձեռնությամբ: Ենու թվի ողոստոսին թերթի առաջարկ մատցրեց կոլխոզում վորոշիլով յան կարմիր հեծյալներ պատրաստելու մասին, վորոնք պատրաստ

լինեն ամեն մի բոպե փոթորկի պես հարձակվելու թշնամու վրա։ Կոլտողնիները ջերմադին պաշտպանեցին թերթի առաջարկը և պարապմունքների համար տրամադրեցին մեկ ճի։

Անցյալ տարի տեղի ունեցան քննությունները։ Ութը կոլտողնիներ պատվով բռնեցին քննությունները և ստացան «Վորոշելովյան հեծելակի» կրծքանշաններ։

Պատի թերթի նույն այդ համարում տպագրված էն կոլխոցնիների նամակներ։ Ընկ Մարչենկոն գրում և, վոր ինքը վերջը ջացրել ե տրակտորի խստների դասընթացները և այժմ աշխատում ե տրակտորի վրա։ Նա զորակոչել ե և պարտավորվում է հանձնել պաշտպանական կրծքանշանների նորմաները, սովորել կրակել վորոշչլովի պես։ Կուսակցության և կառավարության առաջին իսկ կոչով ընկ Մարչենկոն պատրաստ ե «տրակտորից նստելու անձի վրա, վորագեպի պատվով պաշտպանի այն դործը, հանուն վորի պայքարել են մեր հայրերի ու յեղբայրները»։

Այդ համարումն ել հենց հրապարակված է կոլխողնիներէի Անաստասյա նովիկովյանի նամակը։

«Յես մտել եմ Ստալինյան յերրորդ հնդամյակի ամպան մրցության մեջ, — գրում են նա, — և պարտավորվել եմ կատարել ու դերակատարել արտադրանքի նորմաները։ Ստանձնած պարտավորությունը կետարեմ պատվով... այժմ յես ուսումնասիրում եմ տրակտորը, դա անհրաժեշտ ե, վորովհետեւ մենք գտնվում ենք կապիտալիստական ըրջապատման մեջ։ Յես հայսատիացնում եմ, վոր ամեն մի բոպե յես աշխատանքի մեջ կփոխարինեմ տղամարդկանց և կաշխատեմ տրակտորի վրա, իսկ յեթե հարկ յեղավ, ապա կնստեմ տանկի դեկի առաջ»։

Թերթերը պետք ե ցուցաբերեն ավելի մեծ նախաձեռնություն, հետաքրքիր մտահղացումներ։ Այսպես որինակ, կուրսկ երայրանի Հյուսիսային գետոյի «Տասնչինտ հաղարական» թերթի խմբութ, կուրսկ քաղաքը քաջարի կարմիր գնդերի կողմից սպիտակի գլաների ավելի բարդացությամբ, լույս եր ընծայել թերթի հատուկ համար։ Թերթը հրապարակել եր քաղաքացիական պատերազմի ժամանակ կուրսկի համար մղված կոլխոներին մասնակցողների հիշողությունները, պատմական հետաքրքիր փաստեր։

Նույն այդ համարում խմբկոլը թղթակցություններ եր

տպագրել ստախանովական յերկաթուղայինների հաջողությունների մասին, լվացումների միջև ընկած ժամանակաշրջանում ամելի մեծ վաղքի, վառելիքի խնայողության, անավարիա աշխատանքի համար նրանց սրայաբարի մասին։ Այդտեղ ել հենց հագորդվում է շոգեքարչայինների մրցության արդյունքների մասին։ Ելապես, անցած որերի պահանջմանի դորձերը ձախակցում են մեր որերի աշխատանքային արխության փաստերի հետ։

Պաշտպանական թեմայի վերաբերյալ թղթակցություններն ու հողվածները պետք ե պարբերաբար տեղ գտնեն յուրաքանչյուր պատի թերթում։ Լավ կլինի, յեթե ստեղծվի «Ամրապնդենք ԽՍՀՄ պաշտպանությունը» մշտական բաժին։ Ոպտակար ե կաղմել թերթում պաշտպանական հարցերի լուսաբանման պլան և այն քննության առնել Պաջը-Ալիքաքիմի, Կարմիր խաչի և այլ պաշտպանական ընկերությունների ակտիվիստների հետ միասին։

Յուրաքանչյուր կուսակցական և վոչ-կուսակցական բոլշևիկի անփոփոխ հատկությունն ե—բոլշևիկյան գգաստությունը։ Պատի թերթերի խնդիրն ե՝ նախատել աշխատավորության քաղաքական զգաստության բարձրացմանը, նրանց մորիկիզացիայի յենթարկել կապիտալիստական յերկրների տրոցկիստական-բուխարինական սոոր զործակալության վնասարարության հետեւ վանքներն ամենաբարդ կերպով լիկիզացիայի յենթարկելու համար։

Հարկավոր ե ամբողջ ժամանակ նկատի ունենալ, վոր «...քանի զոյսիթյուն ունի արտաքին կապիտալիստական շրջապատռումը, ուսումնաբերքը պետությունների հետախուզությունները մեզ մոռկուզարիկեն վնասարարներ, զիվերաստներ, լուսեներ ու մարդկուցման վնասարարներ, վիզերաստներ, վիզերաստներ և թուրացնեն դասպաններ, վորպեսի փչացնեն, վնաս հասցնեն և թուրացնեն մեր յերկրը, վորպեսի խանդարեն կոմունիզմի աճմանը և ԱՄՀՄ-ում» (Համկ(բ)կ 18-րդ համարումարի՝ լիկ Առլուսովի զեկուցման առթիվ ընդունված բանաձեկց)։

Անհրաժեշտ ե, վոր պատի թերթերի խմբկոլները և բանություղթակեցներն այս ցուցումից անեն պրակտիկ հետեւթյուններ։ Նրանք պետք ե կոնկրետ որինակներով աշխատավորության մեջ դաստիարակեն բոլշևիկյան զգաստության զգացմունք։

ՊՐՈՊԱԳԱՆԴԱ. ԱՆԵԼ ՍՏԱԼԻՆՑԱՆ ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ՄԵծ Ստալինյան Սահմանադրությունն ամփոփեց սոցիալիզմի հաղթանակների հանրագումարները, ամրապնդեց այն համաշխարհային պատմական փաստը, վոր Խորհրդային Միությունը մտել ե դարդացման նոր շրջան, սոցիալիստական հասարակարգի կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը:

Ստալինյան Սահմանադրությունը դարձել ե խորհրդային ժողովրդի զբոշը: Այն՝ բանվոր դասակարգին, գյուղացիությանը, խորհրդային ինտելիգենցիային վիճում և պայքարելու հանուն կոմունիզմի նորանոր հաղթանակների:

Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ քաղաքացիներին տալիս ե մեծագույն իրավունքներ, վորոնք տեսնված չեն կապիտալիստական վոչ մի յերկրում, —տալիս ե աշխատանքի, կրթության, հանգստի, ծերության հասակում ապահովության իրավունք, ժողովների, մամուլի ազատություն և այլն: Սահմանադրության յուրաքանչյուր հողվածը խոսում ե լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ մեր ձեռք բերած հաղթանակների մեծության մասին:

Յուրաքանչյուր պատի թերթի խնդիրն ե՝ լայնորեն պրոպագնա անել Ստալինյան Սահմանադրության գաղափարները, աշխատավորներին դաստիարակել մեծ Խորհրդային Միության քաղաքացու պարտականություններն ազնվորեն ու անշեղորեն կատարելու վրով:

Սակայն վորոշ պատի թերթեր սահմանափակվում են այդ կարեռագույն հարցը միայն «տոնից-տոռ»—Ստալինյան Սահմանադրության որվան, ընտրական կամպանիաներին և այլն նվիրված հատուկ համարներում լուսաբանելով: Այդ թեմայի վերա-

բերյալ թղթակցությունները հաճախ կրում են լնդհանուր դեկտապիկ բնույթ:

Պատի թերթերի գլխավոր խնդիրն ե՝ ցույց տալ Ստալինյան Սահմանադրությունը գործողության մեջ, կյանքում:

Վերցնենք որինակ Սահմանադրության 118-րդ հոդվածը՝ ԽՍՀՄ քաղաքացիների աշխատանքի իրավունքի մասին: Վո՞րքան հեանալի թեմաներ կան այստեղ պատի թերթի համար: Հին բանվորների, կոլխոզների, ինտելիգենտների հիշողություններն անցյալ ժամանակվա մասին, յերբ աշխատավորների դիմավերեվում մշտապես կախված եր գործազրկության սպառնալիքը: Պատմվածքներ՝ անցյալի ստրկական աշխատանքի և ներկայումս իր համար, իր հարազար պետության համար կատարվող աղատ, հրճվալից աշխատանքի մասին: :

Իսկ Սահմանադրության հոդվածները՝ հանդսուի, ծերության հասակում ապահովման, կրթության մասին, կանանց իրավածավասարության, ազգությունների իրավահավասարության մասին, —մի՞թե Ստալինյան Սահմանադրության այս հոդվածները թեմաների առան աղբյուր չեն պատի թերթերի համար, թղթակցությունների ու հոգվածների համար, փորոնք հիմնված լինեն տեղական կյանքից վերցրած կենդանի, հուղիչ փաստերի վրա:

Հարկավոր ե պատի թերթերում ամելի լայնորեն պրոպագնանդա անել Սահմանադրության այն հոդվածները, վորոնք խոսում են ԽՍՀՄ քաղաքացիների պարտականությունների մասին.

—Պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, սահմանել աշխատանքի կարգապահությունը, ազնվորեն վերաբերել դեպի հասարակական պարտը, հարգել սոցիալիստական հանրակեցության կանոնները:

—Պահպանել և ամրապնդել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորակս խորհրդային կարգերի սրբազն և անձեռնմխելի հիմքը, վորակս հայրենիքի հարստության ու հղորության աղբյուր, վորակս բոլոր աշխատավորների ունեուր և կուլտուրական կյանքի աղբյուր:

—Կատարել պատվագոր պարտականությունը՝ զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի չարքերում, պատվով կրել սոցիալիստական մեծ պետության մարտիկի կոչումը:

Կոնկրետ որինակներով և փաստերով պետք է ցույց տալ Ստալինյան Սահմանադրությունը զործովության մեջ։ Սահմանադրության մեջ գրի առնված որենքները—խորհրդային Միություն միլիոնավոր քաղաքացիների բուն կյանքն ե, քաղաքացիների, վորոնք կառուցում են կոմունիստական հասարակաբուժ։ Պատիթերթերի, բանվյուղթիթյուններով, այլ իրենց շրջանի, գյուղի կյանքից վերցրած որինակներով ցույց տալ Ստալինյան Սահմանադրության մեծությունը, ամբողջ բաղմաղանությամբ ցույց տալ քաղաքի և գյուղի աշխատավորների վառ կյանքը։

Այլպես և անում Գորկու մարդի Արգամասսկի շրջանի կույրչի անվան կոլխոզի «Պոստալինսկոմու պուտի» (Ստալինյան ուղիով) պատիթերթը։ Այդ պատիթերթի համարներից մեկում այլ նյութերի թվում տպաղրված են յերեք փոքր թղթակցություններ։ Նրանցից մեկում, վորի վերնադիքին և՝ «Շնորհակալություններ կուսակցությանն ու կառավարությանը», մի կոլխոզներունի պատմում և այն հոկայական հոգատարության մասին, վոր Խորհրդային իշխանությունն ու բոլշևիկյան կուսակցությունը ցուցաբերում են, կանանց նկատմամբ։ Նրա ընտանիքը կաղմրած ե 7 մարդուց։ Նա ստացել է 4 հազար ոտքի բաղմաղակության պետական նպաստ։

Յերրորդ թղթակցությունը հաղորդում է, վոր կոլխոզում 50 մարդ ունեն սեփական հեծանիվներ։ 7 կոլխոզներներ վերջին տարիների ընթացքում ձեռք են բերել պատեփուններ։ Կոլխոզներների տներում կա 400 նոր, յերկաթյա մահճակալ։

Յերրորդ թղթակցությունը հաղորդում է «Մաքոի վերադրձը» գեղարվեստական հնչուն Փիլմի ցուցադրման մասին։ Ֆիլմի ցուցադրմանը ներկա յեն յեղել մոտավորապես 300 ժարդ։

Պատիթերթը պետք է աշխատավորներին ոզնեն՝ ըմբռնելու անցած ուղին, պետք է պրոպագանդա անեն դեպի կոմունիդը մեր յերկրի հետագա առաջխաղացման հեռանկարների, Ստալինյան յերրորդ հնգամյակում նշված վեթխարի շնարարության հեռանկարների մասին։ Պատմությունն անցյալի մասին, յերբ բանվորներն ու գյուղացիները վարում եյին ծանր, կարիքով ու վշտով լի կյանք, համեմատելով անցյալը հրճվալից ներկայի հետ, —ներկայացնում ե վառ համոզիչ նյութ, վորն աշխատա-

վորներին տալիս ե նոր ուժեր, նոր յեռանդ՝ կոմունիզմի կառուցման համար։

Մոսկվայի մարզի Բրոննիցիկի շրջանի Նիկոլյինո գյուղի «Զանուն բարձր բերքի» («Հանուն բարձր բերքի») պատիթերթի համարներից մեկում հրապարակված ե ուսուցիչ Դ. Գորյովի նի նամակը։ Բերենք այդ նամակն ամբողջությամբ։

«Ծանր և անուրախ եր նիկոլյինյան գյուղացիների կյանքը մինչև հեղափոխությունը։ Կուլակը, յերեք խանութպանները, ուրյաղնիկը և տերտերը ծծում եյին չքափորության արյունը։ Առավոտյան ժամը 3—4-ից բնակիչները վեր եյին կենում և սկսում եյին պարան վոլորել, կամ թի դնում եյին աշխատելու հարուստ բուլանովի մոտ։ Ինկ կիրակի որը տղամարդիկ և յերիտասարդները պանդոկներում խմում եյին շաբաթվա ընթացքում վաստակած գրոշները։ Այսպես եյին ահա առգում մարդիկ՝ կարիքի, խալարի մեջ, առանց բուժողնության, քաղաքական ամեն տեսակի իրավունքներից բուրկ։ Բանկեց Հոկտեմբերը։ Կյանքն ընթացավ այլ կերպ։ Պուրկ։ Բանկեց Հոկտեմբերը։ Կոլխոզն ունի շրջանակույթ կաթնա-ապրանքային և խոզաբուծական ֆերմաներ։ Կոլխոզի դաշտերում աշխատում են տրակորուներ, կոմբայններ։ Նիկոլյինոյում կա վուշակը մեքնաներ։ Նիկոլյինոյում կա վուշակը միջարարդ գրիպոց, վորտեղ սովորում են 440 աշակերտ, կամ ակումբ, հնչուն կինո, ծննդատուն, ամբուլատորիա, գրադարան, վորն ունի 4 հաղար կտոր գիրք։ Գրքեր Նիկոլյինոյում շատ կան։ Դպրոցում ես կա 1500 կտոր պիրք, կուսկարիներում՝ 200 կտոր։ Նիկոլյինոյում 250 տնտեսություններն ստանում են 400 թերթ և ժուռնալ։ Նիկոլյինոյում կա 170 ուաղիներու, կառուցված ե ելեկտրուկայան։

Կա Փիզկուլտուրային կազմակերպություն, լարային նվազախումբ, մանկական յերգեցիկ խումբ, մեծահասակավախումբ, մանկական յերգեցիկ խումբ, վորը դորձում է արդեն 5-րդ տարին։ և չորս անդամ մասնակցել է մարզային ոլիմպիադաներին։ Կան կարմիր խաչի, Պաջը-Ավիտաքէմի, կոմյերիտական կաղական կարմիր խաչի, Պաջը-Ավիտաքէմի, կոմյերիտական կաղական կարմիր պություններ և կուսակցական կաղակերպություն։

Դժվար ե նույնիսկ թվարկել այն փոփոխությունները Նիկոլյինոյի կանքում, վորոնք կատարվել են խորհրդային

իշխանության տարիների ընթացքում : Բայց առվածից ել յերեսում ե , թե Նիկոլինոն ինչպիսի վիթխարի թոփչք և կատարել գեղի առաջ՝ Լենինի-Ստալինի կուսակցության դեկավարությամբ» :

Մեր պատի թերթերը հսկայական դեր խաղացին աշխատավորների գեղութատատների տեղական Խորհուրդների ընտրությունների՝ անցկացված ընտրական կամպանիայում : Նրանք պրոպագանդիստական ու ազիտացիոն լայն աշխատանք ծավալեցին՝ պատմում ելին կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների մասին, ոգնում ելին ընտրությունների կազմակերպական նախապատրաստությանը :

Մոլոտովյան մարզի Ռոմնոկի ցրջանի Գրեմյաչինսկի գյուղ-խորհրդի «Էսկրա» պատի թերթը յուրաքանչյուր համարում թղթակցություններ եր տաղաղում ընտրություններին նախապատրաստվելու մասին, ցույց եր տալիս լավագույն աղիտատորների աշխատանքը : Թերթը տպագրեց ընտրողների շատ նամակներ այն մասին, թե նրանք ինչպես են պատրաստվում դիմավորել ընտրությունների որը : Պատմելով դեպուտատատության թեկնածուների մասին, պատի թերթը փատերով և որինակներով ցույց եր տալիս կոլխոզների ուներության աճումը : Ամբողջ անդամները կոլխոզների համար կազմակերպում ելին ընթերցանություններ և զրույցներ զանազան թեմաների շուրջը :

Ընտրությունների ժամանակաշրջանում պատի թերթի խօսքը և բանդյուղթակիցները կուտակեցին աղիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքի մեծ փորձ, զգալիորեն ուժեղացրին իրենց կապերը մասսաների հետ : Այժմ անհրաժեշտ է ողտագործել ընտրական կամպանիայի ժամանակ կուտակված փորձը, ամբապնդել իրենց կապերն այդ ժամանակվա ընթացքում աճած ակտիվի հետ :

Հատ պատի թերթերը ընտրություններից հետո դադարեցին զրել աղիտացիոն աշխատանքի մասին, թուլացրին ուշադրությունը այդ կարերագույն ընազավարի նկատմամբ : Մինչդեռ բոլշևիկյան աղիտացիան պետք ե մեծ տեղ դրավի աշխատավորների կոմունիստական դաստիարակության ընդհանուր սիրտեմում : Այն պետք ե նրանց վողենչի նորանոր սիրագործությունների՝ ի փառ սոցիալիստական հայրենիքի, պետք ե վողենչի համառ աշխատանքի՝ մեր յերկրի հզորությունն ամրապնդելու և նրա հարստությունները բազմապատկելու ուղղությամբ :

Պատի թերթերը պետք ե կուսակցական կազմակերպություններին ովնեն Նախկին ընտրական տեղամասերում ամրապնդելու աղիտացիոն աշխատանքը բնակչության մեջ : Հատուկ ուշադրություն պետք ե նվիրել աղիտացիայի վրակին : Հարկավոր ե թերթում տեղ հատկացնել խմբակների ունկնդիրների, զբույցների մասնակիցների յելույթների համար : Թող նրանք պատմեն, թե իրենք ինչ մասին կուղեյին դրույց լսել, արդյոք նրանց բավարարությունը ե աղիտատորի աշխատանքը, ի՞նչ պետք ե անել աղիտացիոն աշխատանքը բարելավելու համար :

Պատի թերթերի շատ խմբուներ ընտրական կամպանիայի որերին լույս են ընծացում հատուկ համարներ, վորոնց մեջ լայնորեն ցույց ելին տալիս Փարբեկաների, գործարանների, կոլխոզների, սովխոզների նվաճումները, վերջին տարիների ընթացքում գյուղում, քաղաքում, ձեռնարկությունում կատարված փոփոխությունները : Նրանք պատմում ելին առաջավոր մարդկանց, նրանց պանծալի գործերի մասին : Յեկայիմ, յերբ ընտրական կամպանիան վերջացել է, անհրաժեշտ ե վորագեղի խմբագրական կոլխոզները, հաշվի առնելով կուտակված փորձը, չարու աշխատանքը : Պատի թերթերի պատվավոր խոնդիրն ե՝ որը ուղարկել տեղական Խորհուրդների գեպուտատներին նրանց պետական պարտականությունների կատարման կործում : Թերթերը կարող են կոնկրետ որինակներով ցույց տալ տեղական Խորհուրդների գեպուտատների աշխատանքը, պատմել, թե տեղական Խորհուրդն ինչպես ե կազմակերպում իր աշխատանքը, ինչպիսի պլան ունի նա :

Պատի թերթերի խմբուները, բանդյուղթակիցները պետք ե հաստատապես յուրացնեն, վոր մեծ Ստալինյան Սահմանադրության պրոպագանդան հակայական նշանակություն ունի աշխատավորների կոմունիստական դաստիարակության դործում :

* * *

Մեր կաղըրերի զաղափարական զինումն ամենավճռական հարցերից մեկն ե կոմունիստական հասարակարգի կառուցման հիմքը իրաղործման ասպարիզում : Ընկեր Ստալինը կուսակցության 18-րդ համագումարում ասաց . «...յեթե մենք կարողանայինք աշխատանքի բոլոր ճյուղերի մեր կաղըրերին պատրաստել յենք աշխատանքի բոլոր ճյուղերի մեր կաղըրերին պատրաստել այն զաղափարականապես և նրանց քաղաքականապես կոփել այն չափով, վորագեղի նրանք կարողանամ ազատ կերպով կողմնորշ-

վել ներքին և միջազգային իրադրության մեջ, յեթէ մենք կառողանայինք նրանց գարձնել լիտվին հասունացած մարզսխատ-լենին-յաններ, վորոնք ընդունակ են առանց լուրջ սխալների լուծելու-յերկրի դեկապարման հարցերը, —աստ մենք բոլոր հիմքերը կունհայինք մեր բոլոր հարցերի ինը տասկերդովն արդեն լուծված համարելու: Իսկ այդ խնդիրը մենք անպայման կարող ենք լուծել, վորովհետեւ մենք այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ու հնարավորություններն ունենք»:

Մարզս-լենինյան թեորիայի, մեր կուսակցության պատմության ուսումնասիրությունը մեր կաղըերին կհարստացնի սոցիալիզմի համար բանկորների և զյուլացիների մզած պայքարի փորձով, նրանց կղինի հասարակական դարպայման որենքների իմացությամբ, հեղափոխության շարժիչ ուժերի իմացությամբ: Մարզս-լենինյան թեորիայի, բոլշևիկյան կուսակցության պատմության ուսումնասիրումն ե'լ ավելի կամքազնդի հավատը լենինի-Ստալինի կուսակցության մեծ զործի վերջնական հաղթանակի նկատմամբ, ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթանակի նկատմամբ:

Միանգամայն պարզ է, վոր պատի թերթերը չեն՝ կարող և չպետք է հրապարակեն տեսական հոդվածներ: Նրանք խնդիրն ե՝ կուսակցական) կաղմակերպությանն ողնել բոլշևիկյուն կաղմակերպելու սլրոպաղանդիսական աշխատանքը:

Հրապարակելով այն ընկերների նամակները, վորոնք հաջողությամբ ուսումնասիրում են ՀամԿ(ր)Կ պատմությունը, պատի թերթը դրանով խնդ մյուս ընկերներին, վորոնք գեռ չեն սկսել մարզսիզմ-լենինիզմի յերկրի ինքնուրույն ուսումնասիրումը, կողնի հաղթահարել անխոտահությունն իրենց ուժերի նկատմամբ և ձեռնամուխ լինել սիստեմատիկ ուսուցման:

Հաղորդումը՝ հերթական դասախոսության, կուսակարինետի ձեռնարկումների մասին, կայացած կնսուլտացիայի, դրագարանում ստացված նոր դրքերի մասին— այս բոլորն ընթերցողների մեջ ցանկություն կառաջացնեն նույնական լինել լուրջ աշխատանքի՝ բոլշևիզմին տիրապետելու ուղղությամբ:

Մեր բոլշևիկյան կուսակցության կանոնադրությունը պահապահույնում ե՝ ՀամԿ(ր)Կ յուրաքանչյուր անդամի՝ անշեղորեն աշխատել իր դիտակցականությունը բարձրացնելու, մարզսիզմ-լենինիզմի հիմքերը յուրացնելու վրա: Պատի թերթերը պետք

ե այն ընկերներին, վորոնք վատ են կատարում կանոնադրության ցուցումը, հիշեցնեն, վոր անհրաժեշտ ե ընդարձակել իրենց գաղափարական մտահորդողնը, պատվով կրելու համար ըուշեկելյան կուսակցության անդամի պատվավոր կոչումը:

Բոլշևիկորեն ծավալելով այդ աշխատանքը, պատի թերթերը մեծ ոգնություն ցույց կտան կուսակցական կազմակերպություններին:

Մեծ են ու պատվավոր պատի թերթերի և բանկյուղթղթակիցների առջև ծառացած ինդիրները: Հանդիսանալով լայն մասների ինքնազորդունեյության արդյունք, պատի թերթերը պետք ե պատվով արդարացնեն սոցիալիստական շինարարության և աշխատավոր մասսաների կոմունիստական դաստիարակության հզոր զենքի իրենց դերը, կուսակցական կազմակերպությունների ակտիվ ողնականի դերը:

Ուստի, ստորին մամուլի մարտունակության և զաղափարական մակարդակի բարձրացումը, բանկյուղթղթակիցների բազմամիլիոն բանակի դաստիարակումը բոլշևիկյան վորով,— կուսակցական կազմակերպությունների կարեռագույն խնդիրն ե հանդիսանում:

ՍՏՈՒԴԻ ԶԱՐՅԵՐ

1. Ի՞նչպիսի խոշոր փոփոխություններ են կատարվել Ֆերմակում ստալինյան յերկու հնդամյակների հաղթանակների հետևածքով:

2. Զարգացման ի՞նչ շրջան է թևակոխել Խորհրդային Միությունը:

3. Ներքին քաղաքականության բնագավառում ի՞նչպիսի խնդիրներ դրեց մեր առջև ընկեր Ստալինը, ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում:

4. Ի՞նչու այժմ զլիավոր, վճռական խնդիր է համդիսանում աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը:

5. Ի՞նչպիս է ձեր պատի թերթը լուսաբանում ստախանովյան շարժման հարցերը և հաղորդում առաջավորների փորձը:

6. Ձեր պատի թերթն ի՞նչպիս է պայքարում հանրային սոցիալիստական սեփականության աղաճանման և ամրապնդման համար:

7. Ի՞նչպիսի ձևերով են զրսեորդում կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ և ձեր պատի թերթն ի՞նչպիս և նպաստում զրանց վերացմանը:

8. Ի՞նչ դեր ունի հակակրօնական պրոպագանդան, աշխատավորների գիտակցության միջից կապիտալիզմի մնացուկները վերացնելու գործում:

9. Ձեր պատի թերթի խմբկոլն ի՞նչպիս է ակտիվին ոգնում կազմակերպելու կուլտուր-քաղաքական աշխատանքը և ի՞նչպիս են կուլտուրայի ու կենցաղի հարցերը լուսաբանում պատի թերթում:

10. Ձեր պատի թերթն ի՞նչպիս է պրոպագանդա ահում Ստալինյան Սահմանադրությունը:

11. Ձեր պատի թերթն ի՞նչպիս է իր ընթերցողներին դաստիարակում խորհրդային հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի վորով:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍ-
ՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱ-
ԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ *)

Վ. Ի. Լենին— Ճառ ժողովրդական կրթության նահանգական ու գավառային բաժինների քաղլուսվարների Համառուսական խորհրդակցությանը, 1920 թ. նոյեմբերի 3-ին: Յերկեր, հատ. 25-րդ, էջ՝ 448—456:

Վ. Ի. Լենին— Յերիտասարդության միությունների խնդիրները: Ճառ ՌԿՕԵՄ Համառուսական յերրորդ համադումարում, 1920 թ. հոկտեմբերի 2-ին: Յերկեր, հատ. 30-րդ, էջ՝ 403—417:

Վ. Ի. Լենին— Ի՞նչպիս կազմակերպել մրցությունը: Յերկեր, հատ. 22-րդ, էջ՝ 158—167:

Վ. Ի. Լենին— Մեծ նախաձեռնություն: Թիկունքում բանվորների հերոսության մասին: «Կոմունիստական շաբաթորյակների» առթիվ: Յերկեր, հատ. 24-րդ, էջ՝ 325—349:

Վ. Ի. Լենին— Մոսկվա—Կազմանի յերկաթուղում կազմակերպված առաջին շաբաթորյակից գեղի Համառուսական շաբաթորյակը—մայումկան: Յերկեր, հատ. 25-րդ, էջ՝ 255—256:

Վ. Ի. Լենին— Սոցիալիզմը և կրոնը: Յերկեր, հատ. 8-րդ, էջ՝ 419—423:

Ի. Վ. Ստալին— Ճառ Համլիչեմ Համամիութենական 8-րդ համագումարում, 1928 թ. մայիսի 16-ին. «Մոլոդայա գվարդիա» հրատարակչություն, 1939 թ., էջ՝ 14:

Ի. Վ. Ստալին— ԽՍՀ Միության Սահմանադրության նախադի մասին: Զեկուցում Խորհուրդների Համամիութենական 8-րդ Արտակարգ համագումարում, 1936 թ. նոյեմբերի 25-ին: «Լենինի հարցերը», 11-րդ հրատ., էջ՝ 507—534:

Ի. Վ. Ստալին— Ճառ ստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությանը, 1935 թ. նոյեմբերի 17-ին:

*) Ազգությունները ցույց են տրված ըստ սույ. Տրատարակության: ԽՄԲ.:

«Լենինիզմի հարցերը», 11-րդ հրատ., Եջ՝ 493—506:

Ի. Վ. Ստալին— Հաշվետու զեկուցում կուսակցության 18-րդ համագումարում, Համկ(բ)կ Կենտկոմի աշխատանքի մասին, 10 մարտի 1939թ.: «Լենինիզմի հարցերը», 11-րդ հրատ., Եջ՝ 564—611:

Վ. Մ. Մոլոտով— ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնդամյա պլանը: Զեկուցում և յեզրափակման խոսք Համկ(բ)կ 18-րդ համագումարում, 14—17 մարտի 1939թ.: Պետքաղհրատ., 1939թ., Եջ՝ 64:

Վ. Մ. Մոլոտով— Հոկտեմբերյան հեղափոխության 22-րդ տարեդարձը: Զեկուցում Մոսկվայի Խորհրդի հանդիսավոր նիստում, 1939թ. նոյեմբերի 6-ին: Պետքաղհրատ., 1939թ., Եջ՝ 20:

Համկ(բ)կ 18-րդ համագումարի բանաձևերը, 10—21 մարտի 1939թ.: Պետքաղհրատ., 1939թ., Եջ՝ 72:

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմություն: Համառոտ դասընթաց: Համկ(բ)կ Կենտկոմի հանձնաժողովի խմբագրությամբ: Հավանություն և դաշտ Համկ(բ)կ Կենտկոմի կողմէց, 1938թ.: Պետքաղհրատ., 1938թ., Եջ՝ 320—336, գլուխ 12-րդ (2-րդ, 3-րդ և 4-րդ բաժիններ):

Յեմ. Յարովակվինի— Կոմունիստական դաստիարակության մասին ստալինյան յերրորդ հնդամյակում: «Պարտիյնոյե ստրուտելստվո» ժուռնալ, 1939թ. № 11, Եջ՝ 30—35:

Ս. Պիչուգինի— Աշխատավորների կոմունիստական դաստիարակության վճռական նշանակության մասին: «Պող ղնամենեմ մարքսիզմ» ժուռնալ, 1939թ. № 4, Եջ՝ 40—54:

Գ. Ալեքսանդրով և Գ. Վասեցկի—Մարդկանց՝ կոմունիզմ կառուցողների զիտակցության միջից կապիտալիզմի մնացուկները վերացնելու մասին (կոնսուլտացիա): «Բոլշևիկ» ժուռնալ, 1939թ. № 4, Եջ՝ 76—80:

Վ. Կոլբանովսկիի— Ինչո՞ւմն են արտահայտվում կապիտալիզմի մնացուկները մարդկանց զիտակցության մեջ: «Վաղոմուշ ոլորտիյնոյ ուչյունե» ժուռնալ, 1939թ., № 13, Եջ՝ 3—4:

Թ. Ոլեշչովի— Մասսաների կոմունիստական դաստիարակությունը և կրօնական մնացուկների վերացումը: «Բոլշևիկ» ժուռնալ, № 9, Եջ՝ 38—48:

Վ. Կոլբանովսկիի—Կոմունիստական բարոյականության հարցերը: «Բոլշևիկ» ժուռնալ, 1939թ., № 15—16, Եջ՝ 95—108:

Յե. Սխակովսկիի— Անձնական և հանրային շահը սոցիալիստական հասարակարգում: «Պող ղնամենեմ մարքսիզմ» ժուռնալ, 1939թ., № 7, Եջ՝ 1—17:

Դ. Շեպիլով— Սոցիալիստական սեփականությունը կովարգային կարգերի հիմքն եւ, «Բոլշևիկ» ժուռնալ, 1939թ., № 11—12, Եջ՝ 69—83:

Ս. Բատիշչենի— Աժուսնության և ընտանիքի մասին սոցիալիզմի ժամանակ, «Պրավդա», 26 սպոտոսի, 1939թ., 4-րդ եջ:

ՑԱՆԿ

ԵԶ

1. Նոր իրադրություն — նոր խնդիրներ	1
2. Հանուն սոցիալիստական հասարակարգին արժանի աշխատանքի արտադրողականության	15
3. Պայքարել մարդկանց գիտակցության միջից կազմակերպման մեջ մնացուկները վերացնելու համար	25
4. Արթուն պահպանել և ամրապնդել սոցիալիստական սեփականությունը	34
5. Հանուն կուլտուրական հեղափոխության նորանոր հաջողությունների	38
6. Դաստիարակել խորհրդային հայրենասիրության դպացմունք	45
7. Պրոպագանդա անել Ստալինյան Սահմանադրության գաղափարները	54

Պատ. Խմբագիր՝ Հ. ՄԱՐԴԱՐՅԱՆ

Թարգմանիչ՝ Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տեխ. Խմբագիր՝ Հ. ԱՅՎԱՋՅԱՆ

Սրբագրիչներ՝ Ա. ՅԵՐԻՑՅԱՆ և Ա. ԲԱԼԱԲԱՆՅԱՆ

Կոնորու սրբագրիչ՝ Ս. ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

Գլավվիտի լիազոր Շ—1156: Պատվեր № 444: Տերաժ 2000:

Հանձնված և արտադրության 21/V 1940 թ.

Ստորագրված և ապագրության 10/VI 1940 թ.



գրի

15036

2279

И. ТУГАРИНОВ
КОММУНИСТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ ТРУДЯЩИХСЯ
И ЗАДАЧИ СТЕННЫХ ГАЗЕТ
(На армянском языке)